Bookmark

Bookmark

Հարութ Կբեյան

Լուրթ

վեպ

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ՀՏԴ 821.19-31Կբեյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Կ110

Կ 110 Կբեյան Հարութ
Լոտո: Վեպ/ Հ. Կբեյան.- Եր.: Newmag, 2020.- 184 էջ:

Այս վեպը հեղինակը սկսել է գրել 2010 թվականին, ավարտին է հասցրել 10 տարի անց: Գրքի գլխավոր հերոսները երկուսն են՝ գործազուրկ Պողոսը և Նաիրյան երկրի նախագահը: Ամեն ինչ սկսվում է այն պահին, երբ Պողոսը «Համապետական լոտոյի» տոմսակ է գնում: Մրցանակը՝ հանդիպում նախագահի հետ:

Վեպը ներկայացնում է Նաիրի երկրի նախագահի անցյալը, կառավարման տարիները և ճակատագրական հանդիպումը Պողոսի հետ: Ո՞րն է լինելու շահումը, նախագահն ի՞նչ է ընծայելու Պողոսին: Ինչո՞ւ է նախագահը վիճակախաղ անցկացնում իր գահակալության մայրամուտին: Պողոսը կհամաձայնի՞ ընդունել նախագահի առաջարկը:

«Բոլոր խոսակցությունները, թե կյանքը շախմատ է, չափազանցված են, Պողո՛ս: Իրականում կյանքն ավելի շատ նման է շաշկիի: Բոլորը ձգտում են հասնել ինչ-որ բանի: Ամենահեշտը ճանապարհին ինչ-որ մեկի կամ մի քանիսի վրայով անցնելն է: Պետք է զգույշ լինես, որ հանկարծ քեզ ֆուկ չանեն: Չես անցնում դու՝ անցնում են քո վրայով: Կամ հանում են խաղից....»:

ՀՏԴ 821.19-31Կբեյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-9217-7-8
Լոտո © 2020 Հարութ Կբեյան, «Նյու Մեգ» ՍՊԸ
Հեղինակի լուսանկարը՝ Վահան Ստեփանյանի
Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Նվիրում եմ ծնողներիս,
կնոջս և երեխաներիս

Bookmark

Bookmark

Եվ ինչո՞ւ միայն նա՛ երգի—
Միայն նա— նաիրցի մի Պողոս.—

Եղիշե Չարենց, Ամենապոեմ

Bookmark

Bookmark

գլուխ 1

Այդ օրը՝ սեպտեմբերի 22-ը, Պողոս Մ.-ի համար որքան ուրախ, այնքան էլ տարօրինակ ու անսպասելի օր էր: Թեկուզ հենց այն պատճառով, որ տուն հասնելը տևեց մի քանի էջ: Երբ աշխատանքային ծանր օրվա ավարտից հետո մետրոյի «Ռոսիա» կայարանի գետնանցումի մոտ ջնջեց լոտոյի տոմսակը, ու մետաղադրամի տակ հայտնվեցին խուճուճ մի հեռախոսահամար և «*Նախագահը սպասում է Ձեր հեռախոսազանգին*» գրությունը, Պողոսի ոտքերի տակ հողը երերաց, ծնկները դողացին:

Անատամ տոմսավաճառը, որ օրվա վերջում արդեն հարբած էր, Պողոսի այլայլված դեմքը տեսնելով՝ օյաղացավ: «Ինչ է շահել, ինչ պիտի շահեր Նաիրյան Հանրապետության նախագահի ձեռնարկած «Համապետական լոտոյով», որ էս մարդու դեմքի գույնը գնաց»: Կիսաբաց բերանով գլխով մի հարցական շարժում արեց: Պողոսն անմիջապես իրեն հավաքեց, սթափվեց վայրկենական ուշագնացությունից, որը հերոսաբար տարավ ոտքի վրա, տոմսակը գրպանը խոթելով, ասաց, որ ոչինչ էլ չի շահել: Արագ քայլերով իջավ գետնանցում ու խառնվեց իր պես տուն շտապող մարդկանց հոսքին:

Մետրոյում, ամբողջ ճանապարհին Պողոսը լարված հե-տևում էր մարդկանց, թե՞ մարդիկ էին իրեն հետևում: Կիսա-քաղց թոշակառուն, որ բացել ու քրքրում էր պայուսակը, գաղտնի գործակալության աշխատակի՞ց էր: Իսկ երեխան, որ, մոր թևին կպած, անճոռնի ձայնով լաց էր լինում ու մորից Սպայդերմենի կոնֆետ ուզում, ուշադրություն շեղող գործո՞ն էր, որ հաջորդ իսկ վայրկյանին դռների մոտ կանգնած, ոտ-քից գլուխ սև հագած երկու երիտասարդները մոտենային իրեն ու գրպանից հանեին-տանեին շահող կտրոնը: Լոտոյի վրա չի՞փ կա, որ գործակալներն իր հետևից են ընկել: Թե՞ ամեն անկյունում ինչ-որ որոգայթ է իրեն դարանակալում:

Մետրոյից դուրս գալով Պողոսը փոխեց իր ամենօրյա, սո-վորական ճանապարհն ու մտավ խանութ: Նախ՝ որ կարո-ղանար պարզել, թե արդյոք իրեն հետևո՞ւմ են, և երկրորդ՝ որ խանութից մի շիշ օղի գներ, որ խմեր, համարձակություն հավաքեր ու նոր միայն զանգահարեր տոմսակում նշված հե-ռախոսահամարով:

Երբ ձեռքը մտցրեց գրպանը, որ օղու համար վճարի, զգաց, որ թղթադրամներն ու տոմսակն իրար են խառնվել: Սառը քըր-տինք անցավ ծոծրակով՝ բա որ հանի, վաճառողը հանկարծ կտեսնի տոմսակը, հետո էլ հարցեր կտա: Արագ կողմնո-րոշվեց, հայացքն ուղղելով վաճառողի մեջքի հետևում շար-ված կոնֆետի տուփերից մի հատ խնդրեց: Հենց վաճառողը շրջվեց կոնֆետը տալու, արագ հանեց գրպանի պարունա-կությունը, տոմսակը ջոկեց ու մյուս գրպանում տեղավորեց: Պողոսը կարող էր իրեն մի փոքր էլ շռայլություն թույլ տալ, քանի որ «ֆայլաբազարում» օրը հաջող էր: Առավոտ շուտ բո-լոր ջահելներին հավաքել-տարել էին ինչ-որ գործի, մնացել

էր միայն հին գվարդիան: Մեկ էլ գործ կպավ. բավական շահեկան գնով Հյուսիս-արևմտյան պողոտայի նորակառույցներից մեկի 29-րդ հարկ բարձրացրին «Պետրոֆ» դաշնամուրը. արտադրողները հաշվի չէին առել, որ դաշնամուրը փոքր-ինչ կոկիկ արտադրեին, քանի որ նահրյան մայրաքաղաքի վերելակներն այնքան նեղ են, որ դաշնամուր խցկել հնարավոր չէ, թե՞ ճարտարապետներն այնքան հեռատես չէին, որ չէին նախատեսել շենքն այնպիսի բնակիչների համար, որոնք դաշնամուր կունենան բնակարանում:

Ինչևէ, սխալներ կան, որ մարդկանց աշխատատեղ են ստեղծում. և՛ դաշնամուր արտադրողները, և՛ ճարտարապետներն իրենց բացթողումներով նպաստել էին, որ Պողոսն ու իր փոդրաթ ընկերներն օրվա հացը վաստակեն:

Շենք մտնելիս Պողոսին արդեն լքել էին լարված մտքերը դարանակալած որոգայթների մասին, և նա այժմ ինքնագոհ իր փոքրիկ խորամանկությունից, որ կատարեց խանութում, մտավ վերելակ: Վերջապես շուրջը ոչ ոք չկար: Հանեց տոմսակը: Գարշահոտ վերելակի հիվանդագին թարթվող դեղին լույսի տակ մեկ անգամ էլ կարդաց *«Նախագահը սպասում է Ձեր հեռախոսազանգին»* գրությունը, ու սիրտը նորից արագ բաբախեց:

Տուն մտավ թե չէ, քայլեց ուղիղ խոհանոց. աղջիկը՝ Սրբուհին, գործընկերուհու՝ Նառայի հետ սուրճ էր խմում, ծխում ու մատները հարդարում: Պողոսը, առանց նրանց ուշադրություն դարձնելու, մոտեցավ պահարանին ու մի բաժակ հանեց, բացեց շիշն ու բաժակը բերնեբերան լցրեց, խորը շունչ քաշեց, բաժակը տարավ բերանին, մի կում արեց, հետո կում

առ կում դատարկեց: Շրջվեց. Սրբուհին ու ընկերուհին զարմացած իրեն էին նայում:

– Ո՞ւր ա մամադ,– հարցրեց Սրբուհուն:

– Սերիալ ա նայում:

Պողոսը կոնֆետի տուփը դրեց աղջիկների դիմաց, վերցրեց շիշն ու բաժակը և դուրս եկավ խոհանոցից:

Նառան հետաքրքրվեց.

– Հագել ա շշին:

– Չէ, ոնց որ, էս ինչ-որ նոր բան ա,– պատասխանեց Սրբուհին:

Երբ Պողոսը մտավ հյուրասենյակ, կինն արդեն երրորդ թաշկինակն էր թրջում: Պողոսը գնաց, նստեց կնոջ կողքին, սեղանին դրեց շիշն ու բաժակը. քանի դեռ կինը սերիալի մեջ է, իրեն ուշադրության չի արժանացնի: Սեղանից վերցրեց հեռակառավարման վահանակն ու անջատեց հեռուստացույցը: Աղունից մի քանի վայրկյան պահանջվեց հասկանալու համար, թե ինչ կատարվեց և թե որտեղից ամուսնուն այդքան համարձակություն, որ կարողացավ հեռուստացույցն անջատել հենց այն պահին, երբ «Հարուստներն էլ են դժբախտ լինում-5» հեռուստասերիալում հենց նոր մահացել էր գեղեցկուհի Անիտայի մայրը, որը, ինչպես իրականում պարզվել էր, հեչ էլ հարազատ մայրը չէր, բայց, միևնույն է, հերոսուհին սրտանց ողբում էր՝ չգիտակցելով անգամ, որ հենց նա է այն հարազատ թշնամին, որը դարձել էր դժբախտ երջանկության պատճառը: Բայց հաջորդ պահին, երբ Աղունի հայացքն ընկավ օղու շշին և բաժակին, հասկացավ, որ ինչ-որ արտառոց դեպք է եղել, քանի որ ամուսինը վերջին տարիներին ընդհանրապես չէր խմում:

Պողոսն ինքնագոհ ժպիտով նայեց կնոջը, ապա գրպանից հանեց և հաղթական խաղաքարտի պես սեղանին նետեց

լոտոյի տոմսակը: Այնպես, ինչպես ֆիլմերում պոկերում հաղթողը սեղանին կնետեր խաղաքարտերը: Աղունը զարմացած նայեց ամուսնուն, ապա՝ տոմսակին: Զգուշորեն վերցրեց տոմսակն ու կարդաց՝ *«Նախագահը սպասում է Ձեր հեռախոսազանգին»* և խուճուճ հեռախոսահամարը:

Աղունն իսկապես հաջողակ էր: Երբ 18 տարեկանում սահմանամերձ մարզից տեղափոխվել էր Նաիրյան մայրաքաղաք Առևտրի տեխնիկումում սովորելու, քաղաքը նվաճելու եկած բոլոր աղջիկների մեջ առաջինն էր, որ քաշել էր իր շահող կտրոնը: Ռայոնից քաղաք եկած աղջնակին նկատել էր ժավելի գործարանում արտադրամասի պետի տեղակալ Պողոսը, սիրահարվե՞լ էր, թե՞ չէ, բայց երրորդ հանդիպումից հետո ընդունել էր Աղունի ամուսնության առաջարկը, իսկ չորրորդ հանդիպումն արդեն Քաղաքացիական ակտերի գրանցման կենտրոնում էր, որտեղից էլ անմիջապես տեղափոխվել էին Նաիրյան մայրաքաղաքի ծայրամասում գտնվող՝ Պողոսի երկսենյականոց բնակարան:

Բայց Աղունն ի՞նչ իմանար, որ սխալ հաշվարկ է արել, որ իր հաշվարկած երջանկությունը երեք տարի անց էն գյոզալ երկրի հետ փլուզվելու է, ու կեղտոտ դեմոկրատներն ավերելու են սոցիալիզմի փայլուն գաղափարը, որը 70 տարի փայփայել ու առաջ էր մղել Նաիրյան երկիրը:

Պողոսը մեծ փլուզումից հետո դեռ մի քանի տարի շարունակել էր աշխատել ժավելի գործարանում, սակայն աշխատավարձն այլևս թղթադրամով չէր վճարվում, իր արտադրածն էին ձեռքը տալիս, նրան վճարում էին ժավելի սպիրտով, որն ինքն ու իր ընտանիքն ինքնուրույն պետք է թղթադրամի

վերածեին: Աղունն առավոտվա 7-ից մինչև երեկոյան 7-ը, 20 լիտրանոց տարան մեջքին, բակից բակ անցնելով գոռում էր՝ «ժավելի սպիրտ»:

Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ Պողոսին աշխատանքից ազատեցին ու վերջնահաշվարկ արեցին, էլի ոչ մի կոպեկ էլ չվճարեցին, փողի տեղը մի ամբողջ ցիստեռն բերեցին ու տեղավորեցին ավտոտնակում: Ժավելն ընտանիքը պահեց մութ ու ցուրտ տարիներին: Բայց ցիստեռնը մի օր դատարկվեց, իսկ սոցիալիզմն էլ հետ չեկավ, և Պողոսը ստիպված վերջնականապես խզեց ժավելի հետ իր բոլոր կապերը՝ մասնագիտական և առևտրային: Նա ցիստեռնը վաճառեց պարսիկներին ու գնաց այնտեղ, ուր իր տղամարդկային հատկություններից միայն բազուկների ուժն էր գնահատվում՝ «ֆայլաբազար»: Բայց մտավորական մարդը, որ կյանքում ֆիզիկական գործ չէր արել, «ֆայլաբազարում» շատ չէր կարող ձգել, մի օր, երկու օր, ամիսներ, հալից ընկնում էր էնտեղ հող փորելով, էս մի տեղը ցեմենտ շաղախելով, էն մյուս տեղը պահարան հարկերով բարձրացնելով: Հույսը Սրբուհին էր, որ դպրոցն ավարտել էր արդեն, համալսարանում անգլերենի բաժին էր ընդունվել, բայց երկրորդ կուրսում արդեն ուսման վարձը չէին հասցնում վճարել, ինչ անեին: «Պա՛պ, ինքս կաշխատեմ, ինքս կմուծեմ վարձերը»,- ասաց: Պողոսն էլ գլխով արեց. «Ճիշտ ես, աղջի՛կս, դու պիտի կարողանաս ինքնուրույն լուծել հարցերդ»: Եվ Սրբուհին գործ գտավ՝ Դուբայում թարգմանչուհի: Առաջին օրերին զանգում, տխուր, ընկճված ասում էր, որ չի դիմանում, ձև է փնտրում, որ հետ գա, բայց Պողոսը հորդորում էր, որ դիմանա, բացատրում էր, որ կյանքում հեշտ ոչինչ չի տրվում, որ յուրաքանչյուրն ինքնուրույն

պետք է դիմանա դժվարություններին, որ դրանք հաղթահարելով, ի վերջո, կհասնի հաջողության: Պողոսի խոսքերը գոտեպնդեցին, թե հետզհետե աշխատանքին հարմարվեց, բայց մի քանի ամիս անց Սրբուկի ձայնն ավելի հանգիստ և ինքնավստահ էր դարձել:

Երբ երկու տարի անց վերադարձավ, ուսումը շարունակելու հոր հորդորներին ականջալուր չեղավ: Ասում էր, թե աշխատանք ունի, թարգմանիչ է աշխատում գործարարների համար, գիշերները տուն գրեթե չէր գալիս: Մի անգամ էլ, երբ Սրբուկն իջել էր հաց առնելու, նրա հեռախոսը զանգեց, Պողոսը վերցրեց, և մի խռպոտ ձայն ասաց՝ Լինդային կարելի՞ է: Պողոսն ասաց, որ սխալվել են, սակայն ձայնը պնդեց, որ ոչ, համարն ասաց և որ այս համարով շատ է զանգել: Երբ Սրբուկը եկավ, Պողոսն ասաց, որ զանգել, Լինդային էին ուզում: Սրբուկը ծիծաղեց, բացատրեց, որ ինքն այնքան սահուն է թարգմանում, որ պատվիրատուներն իրեն Լինդա անունով են կնքել:

Սրբուկը հորն ու մորը համոզում էր, որ չաշխատեն, որ իր վաստակածով կարող են ապրել: Սակայն Պողոսը նրան չէր լսում: «Քանի ոտուձեռս կա, պիտի աշխատեմ, աշխատելն իմ պատիվն է»: Նույնն էլ Աղունը, ինչ է եղել իրենց, որ աղջկա հույսին մնան, վաղն էլ կարող է թարգմանության գործը վերջանալ, ինչ պիտի անեն:

Երբ ժավելի սպիրտը վերջացավ, աշխատանք էր փնտրում, պատահում էր՝ ունևոր մարդկանց տներն էր մաքրում, բայց կայուն գործ էր ուզում, որ որոշակի ժամի գնար, գար, տանը ճաշ եփեր ու տնային գործերով զբաղվեր: Վերջը հավաքարար տեղավորվեց մայրաքաղաքի Հարավ-արևելյան ծայրամասի սաունաներից մեկում: Վճարում էին քիչ, բայց առատա-